ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

1902

I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր ահեղ, ու նըրա օրով
Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով։
Սասմա սարերից շա՛տ ու շատ հեռու
Թընդում էր նըրա հըռչակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր — մի Առյուծ-Մըհեր։

II

Էսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի։ Քառասուն տարում
«Ա՛խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկավ ծերացավ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ։
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթամ ես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու որբ աշխարքի վըրա

Ոտի կըկանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք էր անում հըսկան ծերունի։

III

Մի օր էլ՝ էն գորշ հոնքերը կիտած,
Երբ միտք էր անում, երկընքից հանկարծ
Մի հուր-հըրեղեն հայտնըվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին։
— Ողջո՛ւյն մեծազոր Սասմա հըսկային.
Քու ձենը հասավ Աստըծու գահին,
Ու շուտով Նա քեզ մի զավակ կըտա։
Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըվել,
Էն օր կըմեռնեք քու կինն էլ, դու էլ։
— Իր կամքը լինի, ասավ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նըրանով անմեռ կըմընանք։
Հըրեշտակն էստեղ ցոլացավ նորից,
Ու էս երջանիկ ավետման օրից
Երբ ինը ամիս, ինը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ։
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ձենով Օհանին,
Երկիրն ու որդին ավանդեց նըրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան։

IV

Էս դարում Մըսըր անհաղթ ու հըզոր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագավոր։
Հենց որ իմացավ՝ էլ Մըհեր չըկա,
Վեր կացավ կըռվով Սասունի վըրա։
Զենով Օհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն ելավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ ոտները.
— Դու եղիր, ասավ, մեր գըլխի տերը,
Ու քու շըվաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես։
— Չէ՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ։
Ու գընաց Օհան՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին։
Եկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ։
— Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին։
— Թագավո՛ր, ասին, դու էսքան հըզոր,
Թըրիդ տակին է ողջ Սասունն էսօր.

Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա։
— Դո՛ւք գիտեք, ասավ Մըսրա թագավոր,
Բայց թե իմ գըլխին փորձանք գա մի օր,
Էս օրը վրկա,
Սըրանից կըգա։

V

Էս որ պատահեց, մեր Դավիթ հըսկան
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար թե մարդ,— թե մըժեղ։
Բայց վա՛յ խեղճ որբին աշխարքի վըրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա։
Ձենով Օհանին ուներ մի չար կին։
Մին-երկու լըռեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կըռվել.
— Ես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի եթիմը բերել,
Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
Հո՞ղեմ գըլուխը... ես գերի հո չե՞մ՝
Ամենքի քեֆի ետևից թըռչեմ...
Մի կուռ կորցըրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
Գընա, իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսավ ողբալ ու կոծել,
Իր օրը սըգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ եղավ աշխարքի միջում,
Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խըղճում...

Գընաց Օհանը երեխի ոտի
Մի զույգ ոտնաման բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արավ Սասմա քաղքի գառնարած։

VI

Քըշեց գառները մեր հովիվ հըսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման.
«Է՛յ ջան, սարե՛ր,
Սասման սարե՛ր...»
Որ կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր.
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան։
Դավիթը ընկավ նըրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից —
Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քըշեց ողջ Սասմա քաղաք։
Կաղկա՛նձ ու ոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝
Գալիս են հըրես անհամար գազան.
«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած,
Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։

Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քընում.
Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր,
130 Ելե՛ք, շուտով բացեք դրռներ.
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քըսանն արել...
Շուտով ելե՛ք, եկե՛ք, տարե՛ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արեք։

135 Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ ելան միասին,
140 Գընացին Ձենով Օհանին ասին.
— Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,
Գազանով լըցրեց մեր քաղաքն էսպես,
145 Աստված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չէ էս խա՛լխին լեղաճաք կանի։

VII

Ելավ Օհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուլեր կըփախչեն։ — Մին էլ էնտեղից
150 Մի բոզ նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ։

Դավիթն էր. ելավ, ետևից ընկած
էն սարը քըշեց, ետ բերավ էս ձոր,
Բերավ, ուլերին խառնեց նորից նոր։
— Օ՛ֆ, ի՛նչ դըժար է, հորեղբայր Օհան.
Աստված օխնել է էն սև-սև ուլեր,
Ամա բոզալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցըրվում ողջ սարերն ի վեր.
Էնքան եմ երեկ վազել, չարչարվե՛լ,
Մինչև հավաքել ու տուն եմ բերե՛լ...
Նայեց Օհանը, որ Դավթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի օրվա միջում էնքան է վազել։
— Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի էսպես,
Բոզալուկ ուլեր չարչարում են քեզ.
Էգուց նախիրը կըտանես արոտ։
Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գընաց, նորից նոր մեր Դավթի ոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ հարյուր լըդրական
Ու շինեց Սասմա քաղքի նախրապան։

VIII

Քըշեց նախիրը մեր նախրորդ հըսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման։
«Է՛յ ջան, սարե՛ր,
Սասման սարե՛ր,
Ի՛նչ անուշ է

Ձեր լանջն ի վեր...»
Որ կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր։
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան։
Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ ու վագըր բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպի Սասմա քաղաք։
Ոռնո՜ց, մըռընչյո՜ւն, աղմո՜ւկ, աղաղա՜կ...
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՜նչ տեսան,
Հենց քաղքի վըրա անհամար գազան...
«Վա՜յ, հարա՜յ, փախե՜ք...»
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ։
Դավիթը եկավ կանգնեց մեյդանում.
— Վա՜հ, էս քաղքըցիք ի՜նչ վաղ են քընում։
Հե՜յ կովատեր, հե՜յ գոմշատեր,
Ելե՜ք, շուտով բացեք դըռներ,
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քըսանն արել։
Շուտով ելե՜ք, եկե՜ք, տարե՜ք,
Ձեր եզն ու կով գոմերն արեք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,

Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ ելան միասին,
210 Գընացին Զենով Օհանին ասին.
— Ամա՜ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր,
Մեր եզն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ։
Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եզ,
215 Մի օր էլ քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կըտա կավերի։

IX

Դավիթ չըդառավ, մի կըրա՜կ դառավ։
Ճարը կըտըրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
220 Գընա, որս անի սարերի վըրեն։
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ որսկան։ Գնաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
225 Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, երկա՜ր, ահագի՜ն
Մեկնըվում, քընում կըրակի կողքին։
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,
230 Պառավը վըրեն սաստիկ բարկացավ։
— Վա՜յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՜ս։

Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին —
Ես եմ ու էն արտն Աստրծու տակին,
Ինչո՞ւ ես գընում, տափում, տրրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում։
Թե որսկան ես դու — նետ-աղեղըդ ա՛ռ,
Ծրծմակա գըլխից մինչև Սեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
Որսով մեջը լի որսի սար ուներ.
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.
Կարո՞ղ ես — գընա, էնտեղ որս արա։
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում։
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հորեղբայրդ — Օհանը կասի։

X

Հորեղբոր շեմքում մյուս օրը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին։
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝
Իմ հերը որսի սար է ունեցել,
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ որսասար։
— Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,
Էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր։
Էն սարը, որդի՛, գընաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գընաց էն սարից,
Էլ չկան այծյամ, եղջերու, կըխտար։
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,

(Է՛յ գիդի օրեր — ո՛րտեղ եք կորել),
260 Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,
Էս սարի որսն էլ թալանեց, տարավ.
265 Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպես էր գըրած։
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...
— Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...
270 Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
Մըսրա թագավոր թող Մըսըր կենա,
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարճըդ կապի՛ր, գընանք որսասար։
275 Ելավ Օհանը ճարը կըտըրված,
Գընացին տեսան՝ էլ ի՛նչ որսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ։
280 Ձենով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռըմփաց.
Դավիթը մընաց մըտքի ծովն ընկած։
Մին էլ նկատեց, որ մութը հեռվում
Մի թեժ, փայլփլուն կըրակ է վառվում։

285 էն լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընա՛ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատըռված,
290 Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում ետ քարի վըրա։
Վար իջավ Դավիթ էնտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ջենով Օհանին.
295 — Ե՛լ, հորեղբա՛յր, քանի՞ քընես,
Ե՛լ, էն պայծառ լուսը մի տես։
Լուս է իջել բարձըր սարին,
Բարձըր սարին, մարմար քարին։
Ե՛լ, հորեղբայր, անուշ քընից.
300 էն ի՞նչ լուս է բըխում քարից։
Ելավ, խաչ քաշեց Օհանն երեսին.
— Է՛յ, որդի՛, ասավ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութա սարն է զորավոր։
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
305 Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Ջարխափան։
Մըշտական, երբ որ կըռիվ էր գընում,
Էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում։
Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
310 Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկավ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը էս էլ երբ որ իմացավ,
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբա՛յր ասավ,
315 Որբ եմ ու անտեր աշխարքի վըրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա՛։
Էլ չեմ իջնի ես Մարութա սարից,
Մինչև չըշինեմ մեր վանքը նորից։
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,
320 Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Որ գան՝ էս շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն։
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ։
325 Վարպետ ու բանվոր եկան կանգնեցին,
Ջըրը՛խկ հա թըրը՛խկ նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձըր Մարութա վանքը Տիրամոր։
Ցըրված միաբանք ետ նորից եկան,
330 Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից։

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կըրկին
335 Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարվան խարջը չես առել։

Մելիք զայրացավ.
— Գընացե՛ք, ասավ,
Բադին, Կոզբադին,
340 Սյուդին, Զարխադին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ օխտը տարվան խարաջը բերեք։
Քառսուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
345 Քառսուննն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դըռան ղարավաշ* դառնան։
Ու Կոզբադին առավ զորքեր.
— Գըլխի՛ս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
350 Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեմ Հայոց ազգի։
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բըռնեցին ու երգեցին.
355 — Մեր Կոզբադին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
360 Գարնան շինենք եղ ու չորթան։
Ջա՛ն Կոզբադին, քաջ Կոզբադին,
Սասմա Դավթին զարկեց գետին։
Ու Կոզբադին փըքված, ուռած,

*Աղախին, ծառա (խմբ.)

— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց,
365 Մինչև գալըս դեռ համբերեք,
էն ժամանակ պիտի պարեք...

XIV

Էսպես երգով,
Զոռով-զորքով
Գոռ Կոզբադին մըտավ Սասուն.
370 Օհան լըսեց՝ կապվեց լեզուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելավ,
Խընդիրք արավ.
375 — Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դատած դեղին ոսկին,
Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
380 Վերև՝ Աստված, ներքևը՝ դու...
Ասավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման։
Ու Կոզբադին կանգնեց, ջոկեց,
Մարագն արավ, դուռը փակեց,
385 Քառասուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան։
Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.
390 Սև սուգ կալավ Հայոց ազգին։

XV

Հե՛յ, ո՞ւր ես, Դավի՛թ, Հայոց պահապան,
Քարը պատրովի — դո՛ւրս արի մեյդան։
Քանդած հոր վանքը որ շինեց նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
395 Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,
Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ։
Պառավն էր. եկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.
— Վա՛յ, խելա՛ռ Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,
400 Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.
Կորեկըս արիր գետնին հավասար,
Էս էր մընացել ձըմեռվան պաշար,
Էս էլ կըտրում ես,
Էլ ո՞նց ապրեմ ես։
405 Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ռ գընա՛,
Քու հոր աշխարքին տիրություն արա՛,
Քու հոր գանձը կե՛ր,
Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր ղըրկել է՝ տանի։
410 — Էլ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,
Էդ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում։
— Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում...
Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
415 Դանդալոշ Դավիթ. ղըրկել է հըրեն,
Եկել են Սասմա քաղաքի վըրեն
Բաղին, Կոզբաղին,
Սյուդին, Ջարխաղին,

Թալան են տալի բովանդակ Սասում.
420 Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում.
Քառսուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան։
425 — Ի՞նչ ես, ա՛յ պառավ, էլ ինձ անիծում.
Ցույց տուր մի տեսնեմ — որտե՞ղ են ուզում։
— Ո՛րտեղ են ուզո՛ւմ... Մահըս տանի քե՛զ.
Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...
Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...
430 Ոսկին Կոզբադին ձեր տանն է չափում,
Աղջիկներ փըլեկ մարագն են լըցրած։
Շաղգամը թողեց Դավիթ ու գնաց։
Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին,
Չափում է ոսկին թեղած առաջին,
435 Սյուդին, Չարխադին պարկերն են բըռնել,
Ջենով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին։
Տեսավ, աչքերը արնով լըցվեցին։
— Վե՛ր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնիր դու,
440 Իմ հոր ոսկին է — ես եմ չափելու։
— Կոզբադին ասավ.— է՛յ, Ջենով Օհան,
Կըտաս — տո՛ւր խարջը էս օխտը տարվան,
Թե չէ՝ կըգնամ, միրուքըս վըկա,
Մըսրա-Մելիքին կըպատմեմ, կըգա,
445 Ձեր Սասմա երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կըվարի, բոստան կըցանի։
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըներ,

Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծըռեր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ շըվաք,
450 Կուզեք մեր երկիր դընեք խարջի տա՛կ...
Բարկացավ Դավիթ, չափը շըպըրտեց,
Տըվավ Կոզբադնի գըլուխը ջարդեց,
Ձափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած։
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
455 Հայոց աշխարքից փախան գընացին
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Ձարխադին։

XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՞նչ ասեմ ես քեզ.
460 Մենք ունենք էստեղ դեղին ոսկու դեզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...
Հորեղբայրն ասավ.— Ա՛յ խենթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
465 Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրա։
Ձըտըվիր, հիմի որ զորք առնի՝ գա,
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի։
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող գա, ե՛ս կերթամ,
470 Կերթամ, ե՛ս նըրան պատասխան կըտամ։
Ու մութ մարագի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց։
— Գընացե՛ք, ասավ, ազատ ապրեցե՛ք,
Սասունցի Դավթին արև խընդրեցեք։

XVII

Էսպես ջարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Զարխադին։
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տըվին կըտերներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կոզբադին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերավ կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հենց մոտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
— Է՛յ, Կոզբադին մեծաբերան,
Էդ որտեղի՞ց լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած։
Էն դո՞ւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր ավեր անեմ։
Գացիր Սասուն քանց գել գազան,
Ետ ես գալի քանց շուն վազան...
Ու Կոզբադին խիստ բարկացավ.
— Սո՛ւս կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.

Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չեք տեսել Սասմա ծրռեր։
505 Սասմա ծրռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասմա երկիր քար ու կապան,
Դրժար սարեր, ձոր ու ծապան.
Նրրանց խոտեր — ինչպես կեռ թուր,
510 Ձորք ջարդեցին երեք հարյուր...
Ասավ ու էլ չառավ դադար,
Վրռազ-վրռազ, գըլխապատառ
Վազեց իրեն թագավորին։
Խընդաց թագվորն իր աթոռին։
515 — Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզբադին,
Արժե՝ կախեմ ես քու ճըտին
Մեր ղուզղունի* մեծ նըշանը —
Պարգև քու մեծ հաղթությանը։
Ո՞ւր են, հապա առաջըս բեր
520 Սասմա ոսկին ու աղջիկներ։
Ասավ Մելիք, ու Կոզբադին
Գըլուխ տըվավ մինչև գետին.
— Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,
Ձոռով փախա ես ձիավոր,
525 Ո՞նց բերեի Սասմա ոսկին։
Մի խենթ ծընվեց Հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,
Գըլուխս էսպես տըվավ ջարդեց.
«Ձե՛մ տալ, ասավ, իմ հոր ոսկին,

*Արծիվ՝ ըստ Թումանյանի բացատրության (խմբ.)

530 Չեմ տալ կանայք իմ հայ ազգին,
Սասմա երկիր ձեզ տեղ չըկա...
Քո թագավոր, ասավ թո՛ղ գա,
Թող գա՝ ինձ հետ կըռիվ անի,
Թե ղոչաղ է՝ զոռով տանի»։
535 Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեղ, անմորուք,
Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,
540 Հազար հազար մարդ նոր թախտից ելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...
545 Կանչեցե՛ք, թող գան, հագնեն զե՛նք, զըրա՛հ,
Կըռիվ տի գընամ ես Դավթի վըրա,
Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ։

XVIII

Էսպես անհամար զորքեր հավաքեց,
550 Եկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրա թագավոր։
Էնքան ահագին բազմությունն էն օր
Բաթմանա ջըրին եկավ ու չոքեց,
Ով եկավ, խըմեց — գետը ցամաքեց,
555 Սասմա քաղաքում մընացին ծարավ։

Զենով Օհանին զարմանքը տարավ։
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՜նչ տեսավ։
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
560 Ասես՝ էն գիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ձյունով պատել էր Սասուն։
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՜յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վա՜յ, փախե՜ք, եկա՜վ... հա՜յ, հարա՜յ, եկավ...
565 — Ի՞նչը հորեղբա՜յր, ի՞նչը, ի՞նչն եկավ...
— Ցավն ու կըրա՜կը Դավթի պինչն եկավ։
Մըսրա թագավոր ելել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին...
570 Վա՜յ մեր արևին, վա՜յ մեր աշխարքին...
Ե՜կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սըրի չտա...
575 — Դու կա՜ց, հորեղբայր, դու դարդ մի՜ անիր..
Գընա՜, քու օդում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կելնեմ Սասմա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ։
Ու գընաց Դավիթ ծանոթ պառավին.
580 — Նանի ջա՜ն, ասավ, ժանգոտած ու հին
Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես, չունես, հավաքի՜ր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, որ վըրեն նըստեմ,
Կըռիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ։

585 — Վա՛յ, Դավի՛թ, ասավ, մահս տանի քեզ.
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...
Քու հերն ուներ կըռվի համար
Հըրեղեն ձի, ոսկի քամար,
Ծալ-ծալ կապեն, գուռզը պողպատ,
590 Թամբ սադափեն, կուռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Զըրահ շապիկ, Թուր-կեծակին,
Դու եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես էշ ու շամփո՛ւր...
595 — Ամա՛ն, նանի՛, չեմ լըսել դեռ։
Ո՛ւր են հիմի իմ հոր զենքեր։
— Հորեղբորըդ գընա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանի՛ր, բեր, տուր։
Բան է, թե որ չըտա սիրով,
600 Աչքը հանիր՝ խըլիր զոռով։

XIX

Դավիթ գընաց հորեղբոր մոտ.
— Է՛յ հորեղբայր, կանչեց հերսոտ,
Իմ հերն ուներ կըռվի համար
Հըրեղեն ձի, ոսկի քամար,
605 Ծալ-ծալ կապեն, գուռզը պողպատ,
Թամբ սադափեն, կուռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Զըրահ շապիկ, Թուր-կեծակին,
Կըտաս — բեր տուր...
610 — Վա՛յ, Դավիթ ջա՛ն,

Ահից գոռաց Զենով Օհան.
Քո հոր մահվան տարուց — օրից
Դուրս չեմ հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,
Զըրահ շապիկ, ոսկի գոտին...
Ինձ թող ամա՜ն, մի՛ սպանիր,
Կուզես — հըրեն, գընա հանի՛ր։

XX

Հագավ Դավիթ զենքն ու զըրահ,
Կապեց գոտին, Թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վըրա,
Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Հոր ձին հեծավ ու մըտրակեց.
Զենով Օհան լալով երգեց.
— Ափսո՜ս, հազա՜ր ափսոս հըրեղեն մեր ձին,
Ա՜խ, հըրեղեն մեր ձին.
Ափսո՜ս, հազա՜ր ափսոս մեր ոսկի գոտին.
Ա՜խ, մեր ոսկի գոտին.
Ափսո՜ս թանկ կապեն, որ հագին տարավ,
Ա՜խ, որ հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ,
Օհանը վախեց,
Իր երգը փոխեց.
«Ափսո՜ս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՜խ, Դավիթըս կորավ»։

Էս որ իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ, Օհանի ձեռքը համբուրեց։
Ձենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,
640 Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ դըրավ ճանապարհ։

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ ածդահա։
Սա էլ իմացավ համբավը կըռվի,
645 Մի բարդի ուսին գալիս է ահա։
Գալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.
— Ի՞նչ եք վեր եկել էս դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին որ չեք ճանաչում...
650 Բա չե՞ք իմանում, որ էստեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Ձըքվեցե՛ք, հիմի ուր որ է՝ կըգա,
Եկել եմ սըրբեմ մեյդանը էսօր։

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
655 Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,

660 Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
Զե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք,
Հետո չասեք՝ թե մենք քընած —
Դավիթ գող-գող եկավ, գընաց...

665 Էսպես կանչեց ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Մըսրա զորքի մեջտեղ զարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին։

Ջարդեց, փըշրեց մինչև կեսօր.
670 Կեսօր արինն ելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ։

Կար զորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
675 — Տըղե՛րք, ասավ, ճամփա տըվեք,
Գընամ խոսեմ ես Դավթի հետ։

Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,
Էսպես խոսեց էն ծերունին.
— Դալար կենա՛, կուռըդ, ո՛վ քաջ,
680 Սուրըդ կըտրուկ միշտ քո ձեռին։

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում։
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հե՞ր ես սըրանց դու կոտորում։

685 Ամեն մինը մի մոր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
690 Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քողն երեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել է, էստեղ բերել։
695 Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել։

Թագավորն է քու թըշնամին,
Կըռիվ ունես — իր հետ արա,
Հե՞ր ես քաշում Թուր-Կայծակին
700 Էս անճարակ խալխի վըրա։

— Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ո՞ւր է հիմի,
Որ սև կապեմ նըրա օրին։

705 — Մեծ վըրանում քընած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դեպի մեծ վրրանը
710 Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դրռանը
Գոռաց կանգնած արաբներին.

— Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,
715 Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պետք է քընի.
Երեք օրն է դեռ անցկացել,
720 Չորս օր էլ կա, քունը առնի։

— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վրրանի մեջ՝
Օխտը օրով հանգիստ քընի՛...

725 Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս գա մեյդան,
Էնպես դըրան ես քընացնեմ,
Որ չըզարթնի էլ հավիտյան։

Ելան՝ մարդիկ ճարահատված
730 Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կրընկին։

— Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
էս անիծված լըվի ձեռից,
735 Խոր մըռընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ եկավ, քընեց նորից։

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
740 Շիկնած տըվին մերկ թիկունքին։

— Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
էս անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հըսկան հանդարտ,
Ուզում էր ետ քընել նորից։

745 Տեսավ Դավթին։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռընչալով,
Փըչեց վըրեն, որ թըռցընի
Էն աժդըհին մի փըչելով։

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,
750 Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին։

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց։
755 Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարո՛վ, Դավի՛թ, հոգնած ես դեռ,
Ե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիվ կանենք,
760 Եթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել։

765 Ում որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորստյան հորի վըրա։

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
770 Գընաց նըստեց... ընկավ հորը.
— Հա՛, հա՛, հա՛ հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը։

— Դե, թող հիմի գընա՝ խավար
Հորում փըթի, էնքան մընա։
775 Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա։

XXII

Քընեց էն գիշեր Ձենով Օհանը։
Գիշերն երազում երևաց ծերին՝
Մըսրա երկընքում արև ճառագած,
780 Սև ամպ էր պատել Սասմա սարերին։

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից։
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա։

785 — Հողե՛մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՛վ գիտի՝ Դավիթն ո՛ւր է քեֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում։

Քընեց Օհանը։ Վերկացավ դարձյալ.
790 — Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ.
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած։

— Ի՞նչ եղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով։
795 Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուռ եկավ, քընեց խըռոված հոգով։

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ երկընքի բարձըր կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,
800 Սասմա աստղիկը սուզվեց խավարում։

Զարթնեց վախեցած։ — Տունդ քանդվի, կի՛ն։
Ես ո՛նց լըսեցի քու էդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահելն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, զենքերըս մի բե՛ր...

XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

«Մինչև լուսը կըհասցընեմ».
Ու ձին տըվավ փորը գետին.
— Մեջքըդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ ես թե՞ նաշին։

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երետ փորը գետին.
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին։

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին»։
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ էն գարին։

Հերթը եկավ սևին հասավ.
Գետին չերետ փորը սև ձին։

— Է՛յ, ջան Սևուկ, մինչ ե՞րբ, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

825 «Եթե ամուր մեջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել ոտըդ շուռ տաս,
Կըհասցընեմ», ասավ սև ձին։

XXIV

Սև ձին քաշեց Ձենով Օհան,
830 Ձախը դըրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վըրան.
Կանգնեց Սասմա սարի գըլխին։

Տեսավ՝ Դավթի նըժույգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
835 Ներքև Մըսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով։

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չըպատռի իրեն զոռից,
Կանգնեց Օհան, ամպի նըման
840 Գոռաց Սասմա սարի ծերից։

— Հե՛յ-հե՛յ, Դավի՛թ, որտե՞ղ ես դու.
Հիշի՛ր խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դուրս արի լույսն արևի...

845 Ձենը գընաց դըմբդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասմա սարից ինձ է գոռում։

Ո՛վ Մարութա Աստվածածին,
850 Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձե՛զ եմ կանչել,— հասե՛ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հազար կըտոր,
855 Կըտորները երկինք թըռան,
Ու գնում են մինչև էսօր։

Ելավ հորից, կանգնեց ահեղ,
Սարսափ կալավ դև Մելիքին։
— Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,
860 Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կըռիվ անենք։

865 — Կըռիվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին։
— Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին։

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
870 Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու էնտեղից եկավ կըրկին։

Երեք հազար լիդր էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
875 Եկավ, զարկեց. կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը։

— Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում։
— Չէ՛, ասացին, արնի ծարավ
880 Հըսկաներն են իրար զարկում։

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին։
— Կենդանի՞ եմ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին։

885 — Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Տե՛ս, ո՞րտեղից հիմի կըգամ։
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ։

Երկրորդ անգամ քըշեց Հալաբ
890 Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից։

Եկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան։
895 — Գընա՛ց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռոզ Մըսրա արքան։

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛ — հերթն ինձ հասավ։
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
900 Կանչեց Մելիք ու վեր կացավ։

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, եկավ Դավթի վըրա։

905 Եկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին ելավ Սասմա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական։

Երեք գիշեր ու երեք օր
910 Փոշին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավթի մահվան։

Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փոշում
915 Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում։

Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը։
Սարսափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
920 Ու տապ արավ գոռոզ հոգին։

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վըրեն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։

925 Մըռընչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին։

Առաջ վազեց մազերն արձակ
930 Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավի՛թ, մազըս ա՛ռ ոտիդ տակ,
Էդ մի զարկը ի՛նձ բաշխիր դու։

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկավ քուրը.
935 Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
— Էս մի զարկն ու Աստված, ասավ,
940 Էլ մարդ չըգա, պետք է որ տամ։

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թրռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կայծակին։

945 Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Օխտը գազ էլ դենը գընաց։

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
950 Գոռաց Մելիք հորի տակից։
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

— Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ։
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
955 Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն։

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Ջուր կըտըրվեց ահ ու վախից։
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
960 Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ։

Դուք ըռանչպար մարդիկ, ասավ,
Ջուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք։

965 Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
970 Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
975 Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,
980 Սասմա Դավիթ, Թուր-Կայծակին։

Էն ժամանակ Աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

1904

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ

Բ ՄԱՍԸ

1

Ընկավ Մելիքն ամբարտավան ու պատերազմն
արյունոտ։
Խաղաղ կյանքի, ուրախ օրվան բացվեց հայոց
առավոտ։
Գըտավ կորցրած հանգիստն էլ ետ ամենն իրեն
հարկի տակ,
Վեր բարձրացավ կըտուրներից ծուխը բարդ-բարդ,
կապուտակ։
Կըտրիճ տըղերք զենքի տեղակ առան մանգաղ,
գերանդին,
Զրը՛նգ, զրը՛նգ, զըվարթ ձենով գործը թընդաց մեր
հանդին։
Դը՛մբ, հա դրը՛մբ, թըմբուկ զարկին, զուռնեն* հընչեց
զիլ, ուժեղ,
Քեֆ, կեր ու խում, պար ու խընդում, ու հարսանիք
ամեն տեղ։
— Ապրի Դավիթ, [մեր ապավեն], որ մեզ տըվավ
ուրախ օր,
Իրեն կանանչ կարմիրն էլ թող էսպես կապենք
բախտավոր...

*Զուռնեն թաթարները բերին Հայաստան։ (հեղ.)

Ու նըշանեց Զենով Օհան, Դավթին արավ
տուն ու տեղ,
Աղջիկ ուզեց արժանավոր, թագավորի զարմ ու ցեղ։
Խըլաթ քաղքի թագավորի դուստրը խոսեց
նըրան կին,
Զըքնաղագեղ ու փահլևան էն Զըմըշկիկ Սուլթանին։

2

15 Բայց թե աղջիկ կուզես չըքնաղ, անպարտելի
փահլևան,
Արի՛, գընանք Կապուտ Բերդի թագավորի աղջըկան։
Խանդութ խանո՛ւմ... հուրի ասա, մի աննըմա՛ն, մի
անտե՛ս...
Խանդութ խանո՛ւմ... հալվում էին սըրտերն ամեն
մոմի պես։
Օխտը տարի քառասուն հըսկա թագավորներ
աժդահակ
20 Գուրզերն առած նըստած էին նըրա բերդի
պատի տակ.
Բայց [անտարբեր] գեղեցկուհին իր ամրոցում
ահագին,
Ու չէր զարկում կարմիր խնձորն և ոչ մեկի
թիկունքին։

3

Զենը ելավ, աշխարք ընկավ, գընաց, հասավ
Կապուտ Բերդ,
Թե մեծ կըռվում հաղթեց Դավիթ Մըսրա տիրոջն
անհեթեթ։

25 Էս հաղթական լուրի վըրա քանդվեց սիրտը սիրունի.
Ա՛խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ երանի...
Երնեկ տըվավ՝ խելքը թըռավ, ուշքը թըռավ դեպ Սասում,
Դավիթն է միշտ մըտքի միջին, Դավիթն է միշտ երազում։

4

Երկու աշուղ կանչեց Խանդութ, ոսկի տըվավ լիառատ,
30 — Գնացե՛ք, ասավ, Սասմա քաղաք, Ջոջանց տունը բազմահաղթ,
Իմ գովքն արեք Դավթի առաջ, սերըս սիրտը ձըգեցեք,
Ու կըտրեցեք աչքի քունը, սըրտի հանգիստն կըտրեցեք։
Ապա ինձնից բարով արեք, ասեք՝ մինչ ե՞րբ մընամ քեզ,
Ջիավորված < . . . > թըռած՝ ե՞րբ պիտի գաս ինձ տանես...
35 Սազներն առան աշուղները ու հողից հող <. . .>,
Սազ անելով եկան հասան Սասմա քաղաք, Ջոջանց տուն։
Բարով տըվին շեմքում նստած էն ջոջ Ջենով Օհանին,
Է՞ս է, ասին, աստվածապահ Ջոջանց տունը [մեծ ու հին]։
— Է՛ս է, ասավ Ջենով Օհան, ի՞նչ եք ուզում դուք Սասուն։
40 — Մենք <. . .>, աշուղներ ենք, Դավթին կուզենք դյուցազուն։

Խանդութ խանում ղըրկել է մեզ իր գովքն անենք
Դավթի մոտ,
Պատմենք անտես էն սիրունի անքուն սերը ու կարոտ։
Աստված ինքը թող շեն պահի Ջոջանց տունը
փառավոր,
Շեն պահողին ապրած պահի [էն քաջ Դավթին) <...>։
45 Ջոջանց պարծանք քաջ Դավիթը ո՞րն է արդյոք,
բարեկա՛մ։
— Քաջ Դավիթը, որ լըսել եք, ես եմ, ասավ, հենց որ
կամ.
Ինչ որ Դավթին պիտի ասեք, իմ առաջին ասեք դուք։
Էսպես ասավ Ջենով Օհան, աշուղները <. . .>
Նըստոտեցին ծալապատիկ, <. . .> [ուսներից վեր
բերին],
50 Ու էրվելով, օրորվելով սազներն առան ծընկներին։
— Օրհնյալ Աստված, Տեր բարերար,
Քու զորքն է շատ, քու գործն արդար.
Դու պահապան կըտրիճ Դավթին,
Կըտրիճ Դավթին, իր մուրատին.
55 Իրեն մուրատն իրեն սըրտում,
Իրեն սըրտում — Կապուտ Բերդում...
Օրհնյալ Աստված, բանդ ու բարիդ.
Ամենը սուտ, Դու ճըշմարիտ։
Դու, որ <. . .> ըսկըզբանե
60 Ըստեղծել ես <. . .>
Խանդութ խանում Դավթի համար,
Դու արժանի անես իրար։
Վա՛յ քու տունը քանդվի, Խանդո՛ւթ,
Վա՛յ [քու դուռը փակվի], անգո՛ւթ,

65 Դու քու անհաս աշտարակում,
Աշխարհ ամեն քու կըրակում.
< . . . . . .>
Հասակն ասես՝ շիտակ, Դավի՛թ, դրախտի միջում
կանգնած նոճին,
Ա՛խ, կանգնած նոճին.
70 Ծըծերն ասես՝ ջուխտակ, Դավի՛թ, զանգակներ են
ծոցի միջին,
Ա՛խ, ծոցի միջին.
Աչքերն ասես՝ ծով են, Դավի՛թ, ու [կը] ցոլան աստղ
ու արև,
Ա՛խ, աստղ ու արև.
Ունքերն ասես՝ սև են, Դավի՛թ, սև ամպերը ծովի
վերև,
Ա՛խ, ծովի վերև.
Ճակատն ասես՝ ճերմակ, Դավի՛թ, էն նոր ձընած
դաշտը սերսուփ*,
Ակռեքն ասես՝ գերմակ, Դավի՛թ, լա< լ > մարգարտի
շարոց են սուրբ.
75 Ծամերն ասես՝ ճոխծամ, Դավի՛թ, կրունկն են ծեծում
հողին հավսար,
Վիզը ասես՝ ճոճան, Դավի՛թ, շողման կլափն** ու
շուրթը լար...

*Մաքուրի և սպիտակի գերադրական ձևը
**Նուրբ մաշկ ունեցող կզակ (խմբ.)